



## ՍԵՐԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ

### ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՌԱԴԱՐԱՆԸ ՀԱՆԱՆՉՈՒՄԸ

ՀՀ-ում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրումը ենթադրում էր պետական կառավարման և համապատասխան ծառայությունների ու ստորաբաժանումների գործունեության արմատական բարեփոխումներ: Դրա հիմնարար սկզբունքը հասարակության յուրաքանչյուր անդամի՝ պետական տեղեկատվական ռեսուրսներին, պետական կառավարմանն ու ծառայություններին հասանելիության ապահովումն է՝ ցանկացած պահի և ցանկացած վայրից: Այժմ հանրապետությունում գերակա խնդիրը մնում է հեռահարդորդակցության համակարգը. որը ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հիմնական խթանն է:

**Հիմնաբառեր.** Էլեկտրոնային կառավարում, էլեկտրոնային ծառայություններ, համացանց, էլեկտրոնային առողջապահություն, էլեկտրոնային կառավարություն, կիբեռանվտանգություն

JEL: D85, H11, I18

Վերջին տարիներին պետական ոլորտում էլեկտրոնային կառավարման ներդրման ուղղությամբ բավականին աշխատանքներ են իրականացվել, որոնց արդյունքում ծնավորվել են մի շարք տեղեկատվական համակարգեր, մասնավորապես՝ հանրապետությունում արդեն գործում է հեռուստահաղորդակցման թվայնացված հանակարգը: Հեռարձակման ցանցի ենթաօրուցվածքը ներառում է մեկ կենտրոնական կայան Երևանում, ավելի քան 210 մարզային հաղորդիչ կայաններ և եթերային հոսքերի վերգետնյա փոխանցման օպտիկամանրաթելային ու արթանյակային ցանցեր: Թվային հե-

ռուստատեսության ցանցը ներառում է Հայաստանի բնակավայրերի 100 տոկոսը: Դա Երևանի և հարակից տարածքների հեռուստադիտողների համար ներկայում ապահովում է 18 հեռուստատեսային և 1 ռադիոալիքների անվճար հասանելիություն, իսկ մարզերի բնակիչների համար՝ 9 հեռուստատեսային և 1 ռադիոալիքների, մարզային սփռման հեռուստաալիքների հասանելիություն:

Մշակված համակարգը թույլ է տալիս հեռուստատեսային ալիքները հեռարձակել ինչպես ստանդարտ (SD), այնպես էլ բարձր (HD) թողունակությամբ՝ ունենալով բազմաթիվ լրացուցիչ ծառայություններ զարգացնելու հնարավորություն<sup>1</sup>:


Միաժամանակ՝ էապես բարձրացել է պետական պաշտոնյաների համակարգչային գրագիտությունը, պետական մարմիններն ապահովել են համակարգչային տեխնիկայով, գերատեսչությունները՝ համացանցի հասանելիությամբ, որի շնորհիվ էլ կատարվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն: Սակայն վիճակը դեռևս գրիգորուցիչ չէ տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակում: Բավարար չէ տեղական ինքնակառավարման մարմինների կայքերի որակը: Դրանք ունեն բազմաթիվ թերություններ և շահագործվում են շատ ցածր արդյունավետությամբ: Կայքերի ստեղծման, շահագործման գործընթացները կարգավորող իրավական և տեխնիկական անհրաժեշտ փաստաթղթերը բացակայում են: Դրանց մեջ մասը հիմնականում պարունակում է պարզագոյն, անփոփոխ տեղեկատվություն, որը շատ դանդաղ է բարձրացվում, իսկ համայնքների գերակշիռ մասը ընդիանրապես չունի կայքեր: Այս խնդիրները կրում են հանապետական բնույթը և չեն կարող լուծվել պետական կառավարման առանձին մարմնի մակարդակով: Գործընթացի հաջողության ապահովման համար անհրաժեշտ է համակարգված և համաձայնեցված գործողությունների իրականացում՝ միասնական պետական քաղաքականության շրջանակներում:

Էլեկտրոնային կառավարման արդյունավետությունը մեծապես կախված է հատկապես համացանցի միջոցով մատուցվող ծառայությունների ծավալից, որակից և բովանդակությունից: Զարգացած ենթակառուցվածքներով էլեկտրոնային ծառայությունները էական առաջընթաց են ապահովում պետության կողմից մատուցվող ծառայություններում:

Էլեկտրոնային ծառայությունների ներդրումը պետք է իրականացվի առկա գործընթացների մանրամասն ուսումնասիրության և վերլուծության հիման վրա ձևավորվող նոր ընթացակարգերի կիրառմամբ, գործունակ տեղեկատվական ենթակառուցվածքի ստեղծմամբ: Էլեկտրոնային ծառայությունների մատուցման համակարգերի ներդրումից առաջ անհրաժեշտ է՝

- համապատասխան տեղեկատվական ռեգիստրների առկայություն՝ նույնական և ճշգրիտ տեղեկատվությամբ,
- տեղեկատվության փոխանակության և էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության գործող համակարգի առկայություն,
- կայքերում կամ պորտալում համապատասխան ինտերֆեյսի առկայություն,
- էլեկտրոնային թվային ստորագրության կիրառում,
- քաղաքացիների համար ինտերնետային լայն հասանելիության ապահովում:

<sup>1</sup>Տես [http://mtcit.am/pages.php?lang=1&id=6623&page\\_name=news](http://mtcit.am/pages.php?lang=1&id=6623&page_name=news)



#### Գծապատկեր 1. «Հ տրանսպորտի և կապի նախարարության կողմից մշակված լայնաշերտ օպտիկամանրաթելային ազգային ցանցի ստեղծման նախագծի քարտեզ»

GNC-Alfa ընկերությունն ավարտել է Հայաստանում օպտիկամանրաթելային ազգային ցանցի հյուսիսային հատվածի շինարարությունն ու սկսել դրա շահագործումը: Ցանցի հյուսիսային հատվածը գտնվում է Երևանի և հայ-վրացական սահմանի միջև և հատում է այն երկու կետում՝ Բագրատաշենի և Տաշիրի մոտակայքում:

Երևանի և Իրանի սահմանի միջև գտնվող GNC-Alfa ընկերության ցանցի հարավային հատվածը շահագործման է հանձնվել 2009 թ. սեպտեմբերին:

Այսպիսով՝ GNC-Alfa-ն բազմազանեցրել է համացանցային հասանելիության իր միջազգային խողովակները՝ հնարավոր դարձնելով Հայաստանի տարածքով Հյուսիսի և Հարավի միջև միջազգային տարանցումը<sup>2</sup>:

Հավելենք, որ ընկերության գործունեության հիմնական ուղղություններն են հեռահաղորդակցման մայրուղային ցանցերի կառուցումը, շահագործումը և տրանսպորտային ցանցի ծառայությունների տրամադրումը: GNC-Alfa-ն արդեն ավարտել է Իրանից Երևան օպտիկամանրաթելային մայրուղային մալուխի շինարարությունը և ստացել մինչև Վրաստանի սահմանը մալուխի շինարարությունը շարունակելու թույլտվություն: Ծրագրվում է, որ հյուսիսում ցանցը կմիանա կապի նվազագույնը երկու օպտիկամանրաթելային գծերի,

<sup>2</sup> Տես <http://telecom.arka.am/am/news/internet/3748/>

որոնք գործում են Վրաստանի տարածքում՝ այսկերպ ապահովելով Հայաստանի տարածքով բարձր արագությամբ տարանցման ծառայությունների մատուցումը։ Երկրի ներսում ցանցը կօգնի մինչև Հայաստանի խոշոր քաղաքները։

ՀՀ-ում այսօր գործում է մեծածախ համացանցի երկու օպերատոր։ Առաջինը «ԱրմենՏել» (ապրանքանիշը՝ Beeline) հեռահաղորդակցական ընկերությունն է, իսկ երկրորդը՝ Հարավային Կովկասի խոշորագույն օպտիկամանրաթելային ընկերություններից մեկը՝ FiberNet Communications-ը, որը «ԱրմենՏել» ընկերությանը գուգահեռ կիրականացնի միջազգային համացանցային ելքի և տվյալների փոխանակման ծառայություններ։ Միաժամանակ, հայկական շուկա է մտել մեծածախ համացանցի ևս մեկ պրովայդեր՝ GNC Alfa ընկերությունը։

Այդուհանդեռձ, Հայաստանում թերևս ամենամեծ խնդիրը շարունակում է մնալ համացանցի հասանելիությունը ամբողջ տարածքում։ Առևտրային կազմակերպությունները կենտրոնանում են միայն խոշոր քաղաքների վրա, քանի որ շահավետ չէ մի քանի տասնյակ բնակչի համար համացանցի մալուխի անցկացումը։ Ուստի, այդ կարևոր և բարդ գործն իր վրա պետք է վերցնի պետությունը։ ՀՀ հեռահաղորդակցության ոլորտի քաղաքականությունը մշակում է տրանսպորտի և կապի նախարարությունը։ Այս մարմինը ծրագիր է մշակել ՀՀ-ում ազգային ցանց ստեղծելու վերաբերյալ։ Այդ ցանցը պետք է ունենա 100 մբիթ/վ թողունակություն (գծապատկեր 1)։

Ինչպես տեսնում ենք, այս ցանցն իրար է կապում ՀՀ քաղաքները՝ ստեղծելով մի մեծ ներքին ցանց, որի գործունեությունը կախված չէ արտաքին կապուղիներից։ Բացի քաղաքներից, այս ծրագրով նախատեսվում է օպտիկամանրաթելային մալուխներ անցկացնել նաև գյուղական համայնքներում։ Այս ցանցի շնորհիվ հնարավորություն կստեղծվի ՀՀ բոլոր համայնքներում անցնել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության, իսկ ավելի ուշ՝ նաև էլեկտրոնային ծառայությունների մատուցման։ Տվյալների փոխանակման միասնական միջգերատեչչական ցանցը կունենա տարածաշրջանային բաշխվածություն և կընդգրկի հանրապետության ողջ տարածքը։ Ազգային ցանցը միացված կլինի համացանցին, որը թույլ կտա ապահովել պետական տեղեկատվական ռեսուրսներին և էլեկտրոնային կառավարման ծառայություններին կազմակերպությունների և քաղաքացիների մուտքի հնարավորություն համացանցի միջոցով։ Ինչպես նաև բջջային ցանցին՝ SMS ծառայությունների մատուցման համար՝ անվտանգության ծրագրային և տեխնիկական լիարժեք ապահովմամբ։

Այսօր բազմաթիվ երկրներ դիտարկում են «Հաջորդ սերնդի ցանցը» (Next Generation Access Networks) որպես միջազգային մրցունակության բաղադրիչ<sup>3</sup>։ Քանի որ հնարավոր չէ հստակ կանխատեսել նոր ցանցի ամբողջ ազդեցությունը, կարելի է ընդգծել առաջին սերնդի լայնաշերտ ցանցի համեմատությամբ դրա բարձր արտադրողականությունը։ Տնտեսապես զարգացած երկրներն ընդունում են ապագա սերնդի լայնաշերտ ցանցում ներդրումների կարևորությունը և մշակում են տարբեր ռազմավարություններ։ Այդ ցանցը կարող է ներառել նաև հեռուստատեսություն, էլեկտրոնային առողջապահություն տնային պայմաններում, ինչպես նաև փոքր բիզնեսում ամպային համակարգչային գործողությունների հնարավորություն (Cloud

<sup>3</sup> Տես [http://www.technology-training.co.uk/nextgenerationaccessnsga\\_7.php](http://www.technology-training.co.uk/nextgenerationaccessnsga_7.php)

computing)<sup>4</sup>: Վերջինս իր հերթին զգալիորեն կկրծատի տեսակարար ծախսերը, հնարավորություն կը նձեռի ստանալու նորարարական արագ արտադրանք և մատուցելու նոր ծառայություններ: Անպային համակարգչային գործողությունները տեղեկատվական տեխնոլոգիական ծառայությունների մատուցման նոր մոդելներ են, որոնք ինտերնետի միջոցով տրամադրում են դիմանաժիկ, մաշտաբային և հաճախ վիրտուալ ռեսուրսներ: «Անպ» տերմինը բնորոշում է բարդ ենթակառուցվածքի տեսակ, որը քողարկում է բոլոր տեխնիկական մանրանամանները: Այդ դեպքում տեղեկատվությունը մշտապես պահպանվում է համաշխարհային ցանցի սերվերներում, ժամանակավորապես՝ հաճախորդի համակարգչում:

Ցանկացած նոր էլեկտրոնային ծառայությունների ներդրման գործընթացի հիմնական փուլերն են՝

1. պետական մարմինների կողմից քաղաքացիներին և կազմակերպություններին մատուցվող ծառայությունների ուսումնասիրություն և վերլուծություն,
2. էլեկտրոնային ծառայությունների, դրանց մատուցման կառուցակարգերի վերաբերյալ առաջարկությունների փաթեթի պատրաստում,
3. էլեկտրոնային ծառայությունների մատուցման առաջնահերթությունների սահմանում,
4. պետության կողմից մատուցվող ծառայությունները կարգավորող օրենսդրության մեջ համապատասխան փոփոխությունների իրականացում,
5. էլեկտրոնային ծառայությունների մատուցման կարգի մշակում,
6. էլեկտրոնային ծառայությունների ներդրման տեխնիկական առաջադրանքների մշակում,
7. էլեկտրոնային ծառայությունների տեղեկատվական համակարգերի մշակում և ներդրում,
8. կայքերում և պորտալներում էլեկտրոնային ծառայությունների ինտերֆեյսի մշակում,
9. էլեկտրոնային ծառայություններից օգտվելու ուղեցույցների մշակում և հրապարակում,
10. հանրային իրազեկում<sup>5</sup>:

Էլեկտրոնային ծառայությունների մատուցման ենթակառուցվածքում կարևոր տեղ պետք է գրադեցնեն ծառայությունների մատուցման բազմաֆունկցիոնալ կենտրոնները: Դրանք տեխնիկապես հագեցած տարրածքներ են քաղաքացիների համար հարմար վայրերում՝ պետական տարրեր ծառայությունների մատուցման հնարավորությամբ: Այս կենտրոնները ապահովված են նաև էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքին միացած համակարգիչներով և տերմինալներով, որոնց միջոցով քաղաքացիներն անձանբ կամ սպասարկողի աջակցությամբ կարող են օգտվել էլեկտրոնային ծառայություններից:

Էլեկտրոնային ծառայությունների մատուցման համար լայնորեն կարելի է օգտագործել նաև բջջային հեռախոսակապը: «Բջջային կառավարությունը» (mGovernment) էլեկտրոնային կառավարման համակարգին լայն հասանե-

<sup>4</sup> Stein Stamford D., Bright K., Cloud Computing. Boston, New Modern Technologies, 2016:

<sup>5</sup> Stein Զերնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, Հայաստանի SCS ոլորտի հետազոտության հաշվետվություն – 2012:

Իիությունն է բջջային հեռախոսների միջոցով՝ ապահովելով պետական տեղեկատվական համակարգերին հասանելիություն, ինչպես նաև էլեկտրոնային ծառայությունների ստացում բջջային հեռախոսների միջոցով։ Ծառայությունները մատուցվում են SMS-ի և WAP կայքերի միջոցով։

Այս եղանակով շատ հարմար է իրականացնել այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են՝ հաշվառումը, փաստաթղթերի ստացումը, տարաբնույթ վճարումները, հերթագրումը, դիմում-բողոքները, խորհրդատվության ստացումը, ծանուցումները, ավտոտրանսպորտի կառավարումը, գրոսաշրջային տեղեկատվության տրամադրումը և այլն։

Էլեկտրոնային ծառայություններում բջջային հեռախոսների օգտագործումն ունի մի շարք առավելություններ, մասնավորապես՝

- հեռահաղորդակցության ամենատարածված միջոցն է,
- օգտվելը շատ պարզ է,
- ապահովում է մշտական հասանելիություն,
- Հայաստանի տարածքի 99.8%-ը ապահովված է բջջային կապով,
- մեծ թիվ են կազմում բջջային հեռախոսակապի միջոցով համացանցից օգտվողները,
- միաժամանակ մեծ քանակի բաժանորդների հետ ուղղակի և անհապաղ հասանելիություն է ապահովում։

Ընդ որում, բջջային ծառայությունների մատուցումը արդյունավետ է էլեկտրոնային կառավարման բոլոր ուղղություններում՝ G2G, G2C, G2B։

Էլեկտրոնային կառավարության ծրագրի ներորման հատկանիշներից են՝

1. գործարքների համար անհրաժեշտ ժամանակի և ծախսերի կրծատում,
2. սպառողների հետաքրքրվածություն SS կիրառության մեջ,
3. ռազմավարական կառավարման ապահովում էլեկտրոնային կառավարության կիրառության միջոցով՝ փոխելով կառավարման գործառույթների մշակույթը,
4. մատչելի, արագ և ճշգրիտ տեղեկատվության հասանելիություն,
5. հավաքագրված տեղեկատվության համար գաղտնիության և գործարքների անվտանգ իրականացման ապահովում,
6. սպառողների և կառավարման կառույցների միջև էլեկտրոնային ծառայությունների մատուցմանն առնչվող ծախսերի բաշխման մշակված մոտեցման արկայություն,
7. վերակառուցված կառավարչական գործընթացներ՝ ավելի արդյունավետ ծառայությունների մատուցման նպատակով,
8. ծառայությունների մատուցման գործընթացում նորամուծությունների արկայություն,
9. կարճաժամկետ կենտրոնացմամբ արդյունավետության գնահատում<sup>6</sup>։

Էլեկտրոնային կառավարության մեջ անփոխարինելի դեր ունեն էլեկտրոնային անձնագրերը և էլեկտրոնային նույնականացման քարտերը։ Այս նախագծերի իրականացմամբ <<-ում գրադրում է էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներորման գրասենյակը<sup>7</sup>։ Էլեկտրոնային կառավար-

<sup>6</sup> Տես Стрежнев В., Электронное правительство: преодолеть инерцию информатизации. М., “БЛЕСК-2”, 2015, էջ 45–48։

<sup>7</sup> Տես [http://www.ekeng.am/?page\\_id=66&lang=hy](http://www.ekeng.am/?page_id=66&lang=hy)

ման համակարգի արդյունավետ ներդրման համար անհրաժեշտ է համակարգի բոլոր նասնակիցների ապահով և անվտանգ նույնականացում, ինչը հնարավոր է իրականացնել համապատասխան համընդհանուր համակարգի ներդրման միջոցով։ Կենսաշափական տվյալներով նույնականացման և ճամփորդական փաստաթղթերի ներդրումը համապատասխանում է 2008 թ. տեխնիկական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ <<հ՝ Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) ներկայացրած դիմումին, որը բխում է նաև ՄՄԿ-ի հետ երկխոսությունից և Եվրոպի միջազգային հարաբերություններից<sup>8</sup>։ Այս նախագծի շրջանակներում գրաստենյակն իրականացնում է՝

- հնարավոր բիզնես մոդելների մշակում,
- բաժնետերերի համակարգում,
- միջնորդ և ներդրող կազմակերպությունների հետ համագործակցություն,
- համակարգի շահագործման և ներդրման գործընթացների կառավարում և մշտադիտարկում,
- ռիսկերի գնահատում։

Գրասենյակն իր մասնակցությունն ունի էլեկտրոնային առողջապահության և հեռարձշկության բնագավառներում։ Էլեկտրոնային առողջապահությունը նպատակառողված է առողջապահական համակարգի օպերատորների բարեկարգության միջոցով։ Էլեկտրոնային առողջապահությունը կարող է աջակցել առողջապահական համակարգի տարրեր գործառույթների իրականացմանը՝ տրամադրելով տեղեկատվական բազայի և գիտելիքի հարստացման եզակի հնարավորությունը<sup>9</sup>։ Ապահովում է փոխգործակցությունը հաճախորդի և առողջապահական ծառայություն մատուցող ընկերությունների միջև, հաստատությունից հաստատություն կենտրոնացված տվյալների փոխանցումը հաճախորդների և/կամ առողջապահության մասնագետների միջև, նպաստում է ավելի արդյունավետ, կենսական և ընդարձակ հաղորդակցությանը, ծախսերի նվազեցմանը, առավել արդյունավետ առողջապահական ծառայությունների մատուցմանը, ավելի որակյալ և արագ հաղորդակցությանն ու տեղեկատվական հասանելիությանը։

Էլեկտրոնային կառավարման համակարգը կարելի է ներդնել և կիրառել նաև նոտարական բնագավառում։ Նոտարական գործողություններ կատարելիս նոտարը պարտավոր է քաղաքացիներից պահանջել համապատասխան փաստաթղթեր, և քաղաքացին ստիպված է լինում դիմելու պետական մարմինների՝ անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու նպատակով։ Բացի այդ, չկա կտակների միասնական էլեկտրոնային բազա, որի պատճառով երբեմն կտակի (կտակների) առկայության փաստը պարզվում է ժառանգությունն ընդունելիս, ինչն էլ հանգեցնում է վեճերի դատական քննության՝ լրացուցիչ ծանրաբեռնելով դատական համակարգը։

Նոտարական բնագավառում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրմամբ նոտարին հնարավորություն կտրվի մի շարք անհրաժեշտ փաստաթղթեր կամ տեղեկատվություն ստանալ առցանց եղանակով՝ գերծ պահելով դիմողին դրանք այլ մարմիններից ստանալու պարտականությունից։ Բացի այդ, համակարգի միջոցով հնարավորություն կստեղծվի ներդնելու

<sup>8</sup> Stt. United Nations, E-Government Survey 2012:

<sup>9</sup> Stt. [http://www.ekeng.am/?page\\_id=51&lang=hy](http://www.ekeng.am/?page_id=51&lang=hy)

«մեկ պատուհանի» սկզբունքը, և նոտարը, բացի անհրաժեշտ նոտարական գործողություններից, հնարավորություն կունենա գրասենյակից կատարելու նաև այլ գործառույթներ՝ էականորեն նվազեցնելով հանրությանը ծառայությունների մատուցման ժամանակի տևողությունը։ Նոտարական բնագավառում էլեկտրոնային կառավարման համակարգ ներդնելու դեպքում անհրաժեշտ է անշարժ գույքի պետական կադաստրից անշարժ գույքի վերաբերյալ գրանցված սահմանափակումների կամ դրանց բացակայության մասին տեղեկություններ պարունակող տեղեկանքի՝ նոտարի կողմից առցանց ստացման հնարավորության ապահովում, ինչպես նաև որոշակի աշխատակիցների էլեկտրոնային ստորագրությունների, համացանցին միացված համակարգի և էլեկտրոնային փոստի հասցեների տրամադրում փաստաթղթաշրջանառությունն առցանց եղանակով կազմակերպելու նպատակով։

Այս բնագավառում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման հաջորդ քայլը պետք է լինի կառավարման հատուկ համակարգի՝ «էլեկտրոնային նոտարի» կիրառումը, որի միջոցով կստեղծվի ընթացակարգերի մեքենայացման միջավայր, որտեղ բոլոր նոտարական գործողությունները կկատարվեն էլեկտրոնային եղանակով։ Էլեկտրոնային նոտարը իրավաբանական անձանց պետական ռեգիստրից, անշարժ գույքի պետական կադաստրից, շարժական գույքի կադաստրին արնչվող՝ ոստիկանության կողմից վարփող գրանցանաւոյաններից տվյալներ ստանալու հնարավորություն կունենա, որի շնորհիվ կարողանա ստուգել անձի ինքնությունը և ստանալ գործարքի առարկա հանդիսացող ավտոտրանսպորտային միջոցների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն։

Էլեկտրոնային կառավարության ներդրման հետ մեկտեղ անհրաժեշտ է գրադարձել նաև անվտանգության հաղցերով, քանի որ մեծ է հավանականությունը, որ բազմաթիվ մարդիկ ապօրինի ձանապարհով կփորձեն մուտք ունենալ տվյալների շտեմարաններ։ Կիբեռանվտանգությունը, բնականաբար, պետք է ապահովի պետություն։ Կիբեռանվտանգության ապահովման օբյեկտներն են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, կարևոր նշանակության օբյեկտներում և էլեկտրոնային ծառայություններ մատուցող պետական կազմակերպություններում առկա տեղեկատվական համակարգերը, հաղորդակցական, ցանցային և արցանցային համակցման միջոցները, սերվերները, համակարգային և կիրառական ծրագրերը, տվյալների շտեմարանները և դրանց կառավարման համակարգերը, վերջնական օգտագործողների համակարգչները, ստացվող/տրամադրվող էլեկտրոնային ծառայությունները, էլեկտրոնային ձևով մշակվող, շրջանառվող, պահպանվող և հրապարակվող տեղեկատվությունը, ինչպես նաև էլեկտրոնային ծառայություններ չմատուցող առևտրային կազմակերպություններում պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և էլեկտրոնային ծառայություններ մատուցող պետական կազմակերպությունների կողմից տրամադրվող էլեկտրոնային ծառայությունները և էլեկտրոնային ձևով մշակվող, շրջանառվող ու պահպանվող սահմանափակ հասանելիությամբ տեղեկատվությունը։ Կիբեռանվտանգության ապահովման օբյեկտներ են նաև G2C հարաբերություններում պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և էլեկտրոնային ծառայությունների կողմից տրամադրվող ծառայությունները։

Կիբեռանվտանգությունը պետք է ապահովվի հետևյալ ուղղություններով՝

- Էլեկտրոնային կառավարության մաս կազմող տեղեկատվական միջոցների, ծրագրերի պաշտպանություն, գործունեության շարունակականության ապահովում վթարային և արտակարգ իրավիճակներում,
- Էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով ապատեղեկատվության իրավարակման և տարածման, հավաստի տեղեկատվության արգելափակման, նաևնավորապես՝ ազգային, ռասայական ու կրոնական թշնամանքի տարածման դեմ պայքար,
- Կիբեռօգրոհներից պաշտպանություն,
- Կիբեռահարեւէչության դեմ պայքար,
- Կիբեռհանցավորության դեմ պայքար<sup>10</sup>:

Էլեկտրոնային կառավարման ներդրման ժամանակ կարող են առաջանալ նաև այնպիսի խոչընդոտներ, ինչպիսիք են՝

- առցանց ծառայություններից և դրանց առավելություններից անտեղյակությունը,
- Էլեկտրոնային կառավարության իրականացման նախագծերի անհամապատասխանությունը,
- քաղաքացիական ծառայողների բացասական վերաբերմունքը նորարարական փոփոխությունների նկատմամբ, որի պատճառ կարող են լինել աշխատատեղի կորստի վախը, դիմադրությունը համագործակցությանը, տեխնոլոգիաների կիրառությանը, վերափոխումներից խուսափումը և այլն:

Այդ խոչընդոտների հաղթահարման համար պետությունը պետք է իրականացնի մարդեթինգային միջոցառումներ ինչպես բնակչության և գործարարության, այնպես էլ քաղծառայողների և բարձր պետական պաշտոններ գրադարձնող անձանց շրջանում:

«Հազարամային վիճակագրական ծառայությունում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրումը, բացի ներքին փաստաթղթաշրջանառության արագացումից, պետական գերատեսչություններին հնարավորություն կտա առցանց տվյալներ փոխանցելու ԱՎԾ-ին: Ցանկալի է նաև տվյալ համակարգի շրջանակներում ստեղծել այնպիսի համակարգչային ծրագիր, որը մեքենայորեն տարրեր գերատեսչություններից կիավաքագրի անհրաժեշտ տեղեկատվությունը և կտրամադրի ԱՎԾ-ին, ինչի շնորհիվ կտնտեսվեն ժամանակը և աշխատանքային ռեսուրսները:»

«Mulberry» ԷՓԸՀ-ով ՀՀ-ում դեռևս ոչ բոլոր բուհերն են աշխատում: Ցանկալի է, որ այս գործընթացում ընդգրկվեն ՀՀ տարածքում գործող բոլոր պետական և մասնավոր բուհերը: Դա թույլ կտա արագացնել ոչ միայն բուհերի և ՀՀ կրթության ու գիտության նախարարության, այլև միջբուհական փաստաթղթաշրջանառությունը: Սա նոր հնարավորություններ կստեղծի նաև միջբուհական կապերի ամրապնդման համար: Կարելի է, օրինակ, համապատասխան տեխնիկական միջոցների առկայության պարագայում, կազմակերպել առցանց դասախոսություններ մի բուհից մյուսը, ինչպես նաև միանգամից մի քանի բուհի համար հեռարձակել դրանք:

<sup>10</sup> Steu Practical Reverse Engineering: x86, x64, ARM, Windows Kernel, Reversing Tools, and Obfuscation, Bruce Dang, 2014:

Այսպիսով՝ էլեկտրոնային կառավարության զարգացման համար առաջին հերթին պետք է կառուցվի համապետական ցանց, որը հասանելի կլինի ՀՀ բոլոր համայնքներում: Դա հնարավորություն կտա պետությանը ստեղծելու և առաջարկելու էլեկտրոնային կառավարության ծառայություններ:

### Օգտագործված գրականություն

1. Տեխնոլոգիական զարգացում և թվային տնտեսություն: ՀՀ տնտեսության տեխնոլոգիական ներուժի զնահատումը և զարգացման հիմնախնդիրները (Վ. Սարգսյանի ընդհ. դեկ.) «Անբերդ» մատենաշար, Եր., «Տնտեսագետ», 2014:
2. Զերնարկությունների ինկորպորատոր հիմնադրամ, Հայաստանի SCS ոլորտի հետազոտության հաշվենվություն, 2012:
3. Стрежнев В., Электронное правительство: преодолеть инерцию информатизации. М., “БЛЕСК-2”, 2015.
4. Practical Reverse Engineering: x86, x64, ARM, Windows Kernel, Reversing Tools, and Obfuscation, Bruce Dang, 2014.
5. United Nations, E-Government Survey 2012.
6. Stamford D., Bright K., Cloud Computing. Boston, New Modern Technologies, 2016.
7. [http://mtcit.am/pages.php?lang=1&id=6623&page\\_name=news](http://mtcit.am/pages.php?lang=1&id=6623&page_name=news)
8. <http://telecom.arka.am/am/news/internet/3748/>
9. [http://www.technology-training.co.uk/nextgenerationaccessnra\\_7.php](http://www.technology-training.co.uk/nextgenerationaccessnra_7.php)
10. [http://www.ekeng.am/?page\\_id=66&lang=hy](http://www.ekeng.am/?page_id=66&lang=hy)

**СЕДРАК АРУТЮНЯН***Аспирант Академии государственного управления РА*

**Предопределение направлений повышения эффективности электронного управления в государственной системе РА.** – Внедрение системы электронного управления в РА предполагало коренное реформирование государственного управления и деятельности соответствующих структур и услуг. Основополагающий принцип реформирования – это обеспечение доступности государственного управления и услуг государственных информационных ресурсов для каждого члена общества, в любой момент и из любой местности. Теперь в республике приоритетной задачей остается система телекоммуникации, которая является основным стимулом развития информационных технологий РА.

**Ключевые слова:** электронное управление, электронные услуги, соцсети, электронное здравоохранение, электронное правительство, кибербезопасность.

JEL: D85, H11, I18

**SEDRAK HARUTYUNYAN***Post-graduate at the Public Administration Academy of the RA*

**Predetermination of Directions for Increasing the Efficiency of E-Government in the RA Public System.** – The introduction of the E-Government system in the RA presupposed a radical reform of public administration and activities of the relevant structures and services. The fundamental principle of the reform is ensuring the availability of public administration and services, state information resources for every member of society, at any time and from any location. In the Republic the telecommunication system is currently a priority task, which is the main stimulus for the development of information technologies of the RA.

**Key words:** *electronic management, electronic services, social networks, E-health, E-Government, cyber security.*

JEL: D85, H11, I18